

## **ԳՐԵՏԱ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ**

**LՂՀ Գերագույն դատարանի դատավոր, իրավաբանական  
զիրությունների քեկնածու, LՂՀ վաստակավոր իրավաբան**

## **ՀԱՅՑԵՐԻ ՆՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ**

**(զիրական և գործնական հիմնահարցեր)**



Հետազոտության թեմայի ընտրությունը կարևորվում է, մասնավորապես, քաղաքացիական գործ հարուցելու և քաղաքացիական գործի վարույթը կարծելու հետ կապված գործնական հարցերի ճիշտ լուծման անհրաժեշտությամբ, մանավանդ որ դատական պրակտիկայում վերջին ժամանակներու հաճախակի են դարձել շահագրգիռ անձանց կողմից հայց հարուցելու իրավունքի շարաշահման դեպքերը<sup>1</sup>:

Հայցերի նույնության տակ հասկացվում է ներկայացված հայցի առարկայի և հայցի հիմքի նույնությունն այն հայցի առարկայի և հայցի հիմքի հետ, որը կամ արդեն ըստ էտիքյան քննվել և լուծվել է դատարանի /այդ բնույթի/ միջնորդ դատարանի/ օրինական ուժի մեջ մտած վճռով<sup>2</sup> կամ գտնվում է դատարանի վարույթում: Հայցի առարկան և հայցի հիմքը վեճի կողմերի հետ միասին համարվում են այն հատկանիշները, որոնք անհրաժեշտ են գործերն անհատականացնելու համար: Համեմատվող գործերը ճանաչվում են նույնական, եթե միաժամանակ համբնկում են վեճի կողմերը, հայցի առարկան ու հայցի հիմքը՝ հայցի տարրերը: Այս ինտիմուտի օգնությամբ իրացվում է նույնական հայցը

/հայցադիմումը/ դատավորի կողմից ընդունելու ու կրկին քննելու արգելվը, ինչը դատական ակտը դարձնում է կայուն, ամրապնդում իրավակարգը և քաղաքացիական շրջանառությունը, բացառում նոյն գործով միմյանց հակասող դատական ակտերի կայացումը և վերջին հաշվով՝ իրավական պետությանը բնորոշ իրավական որոշակիության սկզբունքի գործողությունը: Նույնության այս տեսակը տեսության մեջ ստացել է «հայցերի արտաքին նույնություն» անվանումը, քանի որ համեմատվում են երկու տարրեր հայցերի տարրերը և վեճի կողմերը<sup>3</sup>:

Գործող օրենսդրությամբ միաժամանակ նախատեսված է, որ վիճելի իրավակարաբերության սահմաններում հայցվորն իրավունք ունի փոխիտելու հայցը՝ փոխելու հայցի հիմքը և հայցի առարկան: Ընդ որում, հայցվորը կարող է փոխել միայն հայցի հիմքը կամ առարկան /հակառակ դեպքում կատացվի, որ ներկայացվում է միանգամայն նոր հայց/: Իսկ դա որոշվում է հայցի հիմքը և հայցի առարկան դատական վճռի բովանդակության հետ համեմատելով: Տեսության մեջ սա կոչվում է «հայցի ներքին նույնություն», քանի որ համեմատվում են ոչ թե տարրեր հայցերի, այլ նոյն հայցի տարրերը տարրեր վիճակներում՝ հայց ներկայացնելու ժամանակ ու հաջորդող փուլերում: Ընդ որում, փոխել հայցի առարկան, նշանակում է փոխել հայցվորի՝ պատասխանողի դեմ ուղղված նյութաիրավական պահանջը: Դա կարող է տեղի ունենալ՝ 1/ մի իրավական նորմի դիսափողիայից մյուսին անցնելով, 2/ իրավունքի պաշտպանության մի եղանակը մի այլ եղանակով փոխարինելով: Փոխել հայցի հիմքը, նշանակում է փոխել այն հանգամանքները, որոնց վրա հայցվորը հիմնում է պատասխանողի դեմ ուղղված իր նյութաիրավական պահանջը: Դա կարող է տեղի ունենալ մի իրավանորմի հիպոքեզից մի այլ իրավանորմի հիպոքեզին անցնելով, ինչը կարող է արտահայտվել՝ 1/ հայցի նախկին հիմքը նոր հանգամանքներով



## LՂՀ դատական իշխանություն

լրացնելով, 2/ հայցի հիմքից նախկինում նշված այս կամ այն հանգամանքը հանելով, 3/ հայցի հիմքում նշված մի հանգամանքն ամբողջությամբ մյուսով փոխարինելով<sup>4</sup>:

Քաղաքացիական գործի հարուցման փուլում գործերի նույնության կանոնի խախտման հետևանքով՝ 1/հայցադիմումի ընդունումը մերժվում է, 2/հայցադիմումը վերադարձվում է:

Այսպես, LՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի /այսուհետ՝ ՔԴՕ/ 81-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նոյն անձանց միջև, նոյն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում առկա է նոյն անձանց միջև, նոյն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ, նոյն անձանց միջև, նոյն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է միջնորդ դատարանի վճիռ, բայց առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ, նոյն անձանց միջև, նոյն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է միջնորդ դատարանի վճիռ, բայց առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է միջնորդ դատարանի վարույթում առկա է նոյն անձանց միջև, նոյն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ:

Նոյն օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում առկա է նոյն անձանց միջև, նոյն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ:

Իսկ եթե գործերի նույնության փաստը պարզվում է քաղաքացիական գործ հարուցելուց հետո, ապա դատարանը կարծում է գործի վարույթը, բացառությամբ դատարանության նախապատրաստական փուլում հայցից հայցվորի հրաժարվելու և դատարանի կողմից միջնորդ դատարանի վճիռ հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքերի /ՔԴՕ 99-րդ հոդվ. 2-րդ, 3-րդ կետեր/:

Գործի վարույթի կարծնան դեպքում նոյն անձանց միջև, նոյն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի բույլատրվում կրկին դիմել դատարան նաև հայցից հայցվորի հրաժարման ու կնքված հաշտության համաձայնությունը դատարանի

կողմից հաստատվելու դեպքերում, բացառությամբ այն դեպքի, եթե հայցվորը հայցից հրաժարվել է դատարանության նախապատրաստական փուլում /ՔԴՕ 99-րդ հոդվ. 6-րդ և 7-րդ կետեր, 100-րդ հոդվ. 3-րդ մաս/:

Ուշագրավ է, որ օրինական ուժի մեջ մտած վերը բացառում է ոչ միայն նույնական հայցի հարուցումը, քննությունը և լուծումը, այլև վարչական վարույթի հարուցումը: Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում առկա է միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած դատական ակտը: Նոյն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տվյալ հիմքով վարչական վարույթը կարծելու դեպքում նոյն հարցով վարույթի վերականությունը և համապատասխան վարչական ակտի ընդունումը չի բույլատրվում:

Գործերի նույնության կանոնն առաջին հերթին տարածվում է կողմերի վրա: Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կողմերը չեն կարող դատարան ներկայացնել նոյն անձանց միջև նոյն առարկայի մասին և միևնույն հիմքերով հայց: Ընդ որում, նշանակություն չունի, թե հայցը ներկայացվել է անձանք հայցվորի, թե նրա ներկայացուցիչը կողմեցից:

Գործերի նույնությունը պահպանվում է, եթե կողմերը փոխում են իրենց տեղերը: Նման դեպքում նոր հայցը, որում նախկին պատասխանողը դառնում է հայցվոր, իսկ հայցից առարկան ու հիմքը մնում են անփոփոխ, համարվում է նախկինը նոյնական:

Հասկանալի է, որ գործերի նույնությունը պահպանվում է իրավահաջորդության դեպքում /հայցվորի կամ պատասխանողի կողմում/, քանի որ իրավահաջորդը փոխարինում է իրավանախորդին, և իրավանախորդի կողմից կատարված բոլոր դատավարական գործողությունները պարտադիր են իրավահաջորդի համար: Այս հարցը կարելի է դիտարկել նաև այլ կողմից: Այն է՝ տվյալ դեպքում իրավահաջորդությունը իրավաբանական փաստ չի համարվում:

Ըստ սուբյեկտային կազմի գործերի նույնությունը, մեր կարծիքով, պահպանվում է նաև ՔԴՕ 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության



ուժով այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից հայց հարուցելու դեպքում, եթե արդեն իսկ առկա է նյութական իրավահարաբերության սուբյեկտի հայցով դատական ակտ: Իսկ եթե երկրորդ հայցը հարուցվում է նյութական իրավահարաբերության սուբյեկտի կողմից, ապա, մեր կարծիքով, հայցերի նույնությունն առկա է, եթե նյութական իրավահարաբերության սուբյեկտն առաջին գործով ներգրավված է ենթադրությամբ:

Ինչպես արդեն նշվել է, գործերի նույնությունը որոշելու հաջորդ չափանիշը վերաբերում է հայցի առարկային ու հայցի հիմքին/հայցի տարրերին/:

Յուրաքանչյուր հայց, ուղղված լինելով այս կամ այն աճան՝ սուբյեկտի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանը, անհատականացվում է հայցի հիմքով և առարկայով: Հայցի առարկայի ու հայցի հիմքի փոփոխմանը հայցը փոփոխվում է, կորցնում իր նույնությունը: Այդ երկու տարրերը հնարավորություն են տալիս հստակ տարրերակել քաղաքացիական մեկ գործը մյուսից և թույլ չտալ նոյն գործի կրկնակի քննություն:

Տեսական գրականության, օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության հիման վրա փորձենք բացահայտել «հայցի առարկա» և «հայցի հիմք» օրենսդրական հասկացությունների իրավական բնույթը, քանի որ ՀԳԴ-ն այդ հարցերը հստակ չի կարգավորել, ինչը հայցերի նույնությունը որոշելու հարցում դժվարություններ է հարուցում:

Հայցի առարկան և հայցի հիմքը հայցի բաղկացուցիչ մասերն են՝ հայցի տարրերը: Տեսության մեջ չի դադարում քանակեան այն մասին, թե ինչ հասկանալ այդ տարրերի տակ: Հայտնի է, որ «հայցի առարկա» եզրույթն առաջին անգամ ուստական կայսրության պաշտոնական գրականության մեջ օգտագործվել է 1888 թվականին, մինչ այդ օգտագործվում էին «պահանջի օրյեկտ», «հայցի օրյեկտ» եզրույթները: Ուստի անվանի դատավարագետ Ե.Վ.Վասկովսկին քաղաքացիական դատավարության դասագրում

/1917թ./ հայցի առարկան համարել է այն, ինչի վերաբերյալ հայցվորը ճգնում է դատարանի վճռի: Կատարողական հայցերում դա նյութաբիրավական պահանջն է, իսկ ճանաչողական և վերափոխիչ հայցերում՝ իրավահարաբերությունները<sup>5</sup>: Այսիսով, ըստ նշված հեղինակի, հայցի առարկան տարրերվում է հայցի տարրեր տեսակերպում:

Այդ տեսակետով /ծեսակերպումների ոչ էական տարրերություններով հանդերձ/ հետագայում ընդունվել է խորհրդային շատ իրավաբանների կողմից<sup>6</sup>:

Կարծիքներ են հայտնվել նաև այն մասին, որ հայցի առարկան իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է կամ ել իրավունքի պաշտպանության եղանակները<sup>7</sup>:

Հեղինակների մյուս խմբի կարծիքով՝ հայցի առարկան հայցվորի նյութափական պահանջն է՝ ուղղված պատասխանողին: Ըստ նշված տեսակետով պնդող հեղինակների՝ հայցի առարկան չի կարող հանդիսանալ վիճելի իրավահարաբերությունը, քանի որ օրենքում ասվում է, որ հայցադիմումում պետք է ցույց տրվի պահանջը, այլ ոչ թե իրավահարաբերությունը: Վիճելի իրավահարաբերությունը չի կարող հանդիսանալ հայցի առարկա, քանի որ ինենց նրանից է բխում հայցվորի՝ պատասխանողի դեմ ուղղված պահանջը: Բացի դրանից, միևնույն իրավահարաբերությունից /հոլովային, ընտանեկան և այլն/ կարող է առաջանալ ոչ թե մեկ, այլ մի քանի պահանջ ու նրանցից յուրաքանչյուրը կարող է ծառայել որպես հայցի առարկա<sup>8</sup>:

Հայտնի դատավարագետ Ռ.Գ.Պետրոսյանի կարծիքով՝ հայցի առարկան կազմում է վիճելի իրավահարաբերությունից բխող և հայցվորի կողմից պատասխանողի դեմ ուղղված նյութափական պահանջը, որի կապակցությամբ դատարանը պետք է վճիռ կայացնի<sup>9</sup>:

Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման՝ հայցի առարկան հայցվորի պահանջն է՝ ուղղված պատասխանողին կամ պատասխանողներին /տես օրինակ, ԵՀԴ-Ն/1373/02/10/2011թ. քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.01.2011թ. որոշումը/:

Վերոնշված մոտեցումը բխում է դատա-



## ԼՂՀ դատական իշխանություն

Վարական օրենսդրության վերլուծությունից: Այսպես, ՔԴՕ 77-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն, հայցադիմումում պետք է նշվեն հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները:

Ասվածից հետևում է, որ իրեն հայցի բռվանդակության տարր, հայցի առարկան հայցը բնութագրում է այն տեսանկյունից, թե կոնկրետ ինչ է պահանջում, ինչի է ճգումում հայցվորը: Բայց դա նյութափրավական պահանջն է: Հենց հայցվորի կողմից պատասխանողի դեմ ուղղված նյութափրավական պահանջի կազմակցությամբ է դատարանն արտահայտում իր կարծիքը վճիռ մեջ: Հայցը բավարարելով՝ դատարանը բավարարում է հայցվորի՝ պատասխանողի դեմ ուղղված պահանջը /լրիվ կամ մասնակի/, հայցը մերժելով՝ դատարանը մերժում է այդ պահանջը: Հայցը բավարարելու դեպքում հայցի առարկան դառնում է վճուհ առարկա, որն արտացոլվում է վճուհ եզրափակիչ մասում:

Ներկայում գրականության մեջ տիրապեսող է դառնում այն մոտեցումը<sup>10</sup>, որ հայցի առարկա հանդիսացող կոնկրետ նյութափրավական պահանջն իր մեջ ներառում է իրավունքի պաշտպանության կոնկրետ եղանակ /եղանակներ/:

Նշված տեսակետը ճիշտ պետք է համարել: Իրոք, հայցի առարկա հանդիսացող նյութափրավական պահանջը պատասխանողին որոշակի գործողություններ կատարելու, դրանք կատարելուց ձեռնպահ մնալու, իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը ճանաչելու, այն փոփոխելու կամ դադարեցնելու մասին է<sup>11</sup>:

Հայցի առարկան տարրերին է հայցի նյութական օրինակի /վենի նյութական օրինակից/, որը կոնկրետ առարկան է, ինչի մասին ներկայացվել է/որին ուղղված է/ հայցային պահանջը: Հայցի նյութական օրինակը մտնում է հայցի առարկայի մեջ, նրա բաղկացուցիչ մասն է կազմում: Միևնույն գույքի նկատմամբ կարող են ներկայացվել տարրեր՝ գույքը հետ պահանջելու, գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և այլն, հետևաբար և՝ յուրաքանչյուր դեպքում հայցի տարրեր առարկաներ միևնույն գույքի նկատմամբ: Այսինքն՝ գույքը առանձին վերց-

րած ոչինչ չի անհատականացնում: Միևնույն ժամանակ, հայցի նյութական օրինակի փոխակերպում փոխվում է հայցի առարկան, ինչը բացառում է սկզբնական և կրկին ներկայացված հայցերի նույնությունը:

«Հայցի հիմք» օրենսդրության հասկացության մեջ նույնպես հստակ չի սահմանված: Գրականության մեջ գործնականում անկիճելի է համարվում, որ հայցի հիմքի տակ հասկացվում են հայցվորի կողմից ցույց տրված /ներկայացված/ իրավաբանական փաստերը, որոնցից նաև բիւեցնում է պատասխանողի դեմ ուղղված իր նյութափրավական պահանջը՝ հայցի առարկան: Հայցի հիմքի հասկացության նման մեկնարանումը բխում է դատավարական օրենսդրությունից: Մասնավորապես, որպես հայցադիմումի պարտադիր վավերապայման, ՔԴՕ-ն սահմանում է, որ հայցադիմումում պետք է նշված լինեն այն հանգամանքները, որոնց վրա հիմնված են հայցապահանջները /77-րդ հոդվ. 2-րդ մասի 4-րդ կետ/: Այդ հանգամանքներն ել հենց իրավաբանական փաստերն են, որոնց հետ վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նյութական իրավունքի նորմը կապում է տարբեկտիվ իրավունքների և պարտականությունների ծագումը, փոփոխումը և դադարումը /դատավարական օրենսդրության մեջ օգտագործվող «իրավաբանական փաստեր» և «հանգամանքներ» հասկացությունները նույնական են/:

Հայցի հիմքը, որպես կանոն, բաղկացած է լինում ոչ թե մեկ, այլ մի քանի փաստերից՝ փաստերի համակցությունից, որն իրավունքի տեսության մեջ կոչվում է «փաստական կազմ»: Դա հայցի փաստական հիմքն է:

Որոշ դատավարագետների կարծիքով՝ «հայցի հիմք» հասկացության բովանդակության մեջ մտնում են ոչ միայն փաստերը, այլև իրավունքը կամ օրինական շահը կամ իրավական նորմը<sup>12</sup>: Ներկայում հայցի հիմքը մասին տեսական բանավեճը հիմնականում ընթանում է հենց այդ ուղղությամբ /հայցի իրավական կամ իրավաբանական հիմքի տակ գրականության մեջ հասկացվում է հայցվորի կողմից ցույց տրված նյութափրավական պահանջը/:

Հայտնի է, որ հայցի հիմքի փաստերը հա-



մարգում են վիճելի, ենթադրվող /ինչպես որ հայցապահանջը/: Հայցվորը կապված չէ իր կողմից ցույց տրված փաստերի իրավաբանական որակնամք. հայցադիմումում հայցվորը կարող է ցույց տալ նաև այլ, օրինակ՝ տեղեկատվական բնույթի փաստական տվյալներ: Քաղաքացիադատավարական օրենսդրությունը հայցվորից նաև չի պահանջում հայցադիմումը պարտադիր հենվել իրավական նորմերի վրա, տալ պատասխանողի հետ ունեցած իր հարաբերությունների իրավական գնահատականը, հայցվորից պահանջվում է միայն նշել այն փաստական հանգամանքները, որոնց վրա հիմնված են հայցապահանջները, որոնց վրա հիմնված իրավաբանական դատավարությունը գործում է դատավորի կողմից օրենքի պատշաճ ինացության կանխավարկածը «*Jura novit curia*», հետևաբար՝ դատավարանն ինքն է պարտավոր իմանալ ու կիրառել իրավական նորմը, թեկուզ հայցվորն ընդհանրապես դրա վրա չինվի կամ հենվի սխալ կերպով: Իրավական նորմի ընտրությունը, վեճի իրավական որակումը հանդիսանում է դատարանի մենաշնորհ/դատարանը կոնկրետ վեճ լուծելիս հայցի հիմք կազմող փաստերի իրավաբանական բնույթը պարզում է կիրառման ենթակա նյութական նորմի հիպոթեզի հիման վրա/: Օրենսդրական նման կարգավորումը նպատակ ունի պահովել դատական պաշտպանության մատչելիության իրավունքը, քանի որ դատարան դիմող շահագրգիռ անձն իրավաբանական անտեղյակության պատճառով կարող է չիմանալ օրենքը, որն ընկած է իր խախտված կամ վիճարկող իրավունքի հիմքում, և շահագրգիռ անձից պահանջել, որ նա, որպես հայցի հիմք, ցույց տա օրենքը, կարող է խոչընդոտել դատական պաշտպանության նրա իրավունքի իրականացմանը:

Տեսակետ է հայտնվել նաև այն մասին, որ օրենքին հղում կատարելը չպետք է մնունել հայցի հիմքի մեջ, քանի որ հայցի իրավական հիմքը կազմում է հայցի առանձին տարր<sup>14</sup>:

Անդրադառնալով «հայցի հիմք» օրենդրական եզրույթին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հայցի փաստական հիմքն ըստ

եռորյան իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ, հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա: Հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերի համակցությունն է, որ կարգավորում է վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումը նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը բացի փաստական հանգամանքներից, կարող է հայցադիմումը նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են հանգապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինս հիմք է տախս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ /նես ըստ հայցի Ամիկ Մնացականյանի ընդդեմ Ռուբիկ Ասատրյանի՝ առողջության քայլայմաք պատճառված վիճակի հատուցման պահանջի մասին թիվ ԵՀԴ/0466/02/11թ. քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.10.2011թ. որոշումը/:

Այսպիսով, հայցի իրավական հիմքը վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավական նորմ է, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել հայցի հիմքի հատկանիշով հայցերի արտարին նույնությունը որոշելիս: Հակառակ դեպքում, ամեն անզամ հայցադիմում այս կամ այն փաստական տվյալ /ընդհանրապես իրավաբանական նշանակություն չունեցող/ կամ տվյալ գործով իրավաբանական նշանակություն չունեցող/ կամ իրավական նորմը կամ իրավական փաստարկներն ավելացնելը, լրացնելը, ուղղելը՝ առանց հայցի հիմք կազմող իրավաբանական փաստերը փոփոխելու, կղիտարկվի իրը նոր հայցի ներկայացում: Դատական պրակտիկայում հաճախակի են շահագրգիռ անձանց կողմից հենց այս հարցում չարաշակումները:

Հայցերի նույնությունը որոշելիս հայցի հիմք կազմող իրավաբանական փաստերն անհրաժեշտ է տարրերել ապացույցներից՝



## ՀՂՀ դատական իշխանություն

իրավաբանական փաստերի մասին տեղեկություններից/ապացույցի նման հասկացությունը բխում է ՔԴՕ 43-րդ հոդվածից/: Այս առումով ևս բոլոր են տրվում դատական սխալներ: ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հայցի հիմքի և ապացույցի հարաբերակցության հարցին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Հայցի փաստական հիմքում դրված իրավաբանական փաստերը միայն վերացական հիմք են պահանջ ներկայացնելու համար: Զարաքացիական դատավարության շրջանակներում դրանք պետք է նաև հիմնավորվեն: Այդ գործընթացը ներառվում է ապացուցման գործընթացում: Այդ տրամաբանությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության շրջանակներում պետք է տարրերակել հայցի փաստական հիմքը, հայցի հիմքը և պահանջը հիմնավորող ապացույցները: Ապացույցները հիմնավորում են հայցի հիմքը կազմող իրավաբանական փաստերը և ի վերջո հայցվորի պահանջը.... Հայցի հիմքում դրված փաստերի հիմնավորումը կապված է ապացուցման գործընթացի հետ և չի կարող նույնացնել հայցի հիմքի հետ.... Հայցի հիմքում դրված որոշակի փաստական հանգամանքները հիմնավորող ապացույցը տվյալ դատավարության շրջանակներում չներկայացնելու պարագայում նոյն փաստական հանգամանքների հիման վրա հայց ներկայացնելու դեպքում տվյալ ապացույցը ներկայացնելը չի կարող որակվել որպես այլ հիմքով հայցի ներկայացում» /տե՛ս Վիքեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրբկ Սեղբալյանի թիվ ԵԾԴ/0473/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը:/

Եթե հայցի փաստական հիմքն այլընտրանքային է, ապա այլընտրանքային որևէ հիմքով հայցը մերժելու դեպքում հայցվորը գրկված չէ այլընտրանքային այլ հիմքով հայց ներկայացնելու իրավունքից: Այս դեպքում հայցերի արտաքին նույնությունը բացավում է: «Նա հավասարապես վերաբերում է նաև այլընտրանքային պահանջներով հայցերին:

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ հայցը հիմնավորող փաստերը հայցն անհատանացնենում են այն պայմանով, որ դրանք գոյություն ունեցած լինեն մինչև դատարանի կողմից դատական ակտ կայացնելը: Այդ պա-

ից հետո առաջացած փաստերը կարող են առաջացնել հայցի նոր հիմք:

Եթե հայցադիմումն ընդունելու ժամանակ դատավորի մոտ կասկածներ են առաջանում հայցերի նույնության վերաբերյալ, ապա նա հայցադիմումը պետք է ընդունի փարույք, որովհետև շատ դեպքերում միայն դատական նիստում հայցն ըստ էության քննելու արդյունքում է հնարավոր լինում վերջնականացնելու լուծել այդ հարցը:

1. *Տվյալ դեպքում «նույնական վեճեր» և «նույնական հայցեր» հասկացույթունները նույնարդում են: «Նա պայմանավորված է նաև ուղղակի որ դատավարության հարուցմանը իրավունքի մասին վեճը չնոր է թերու հայցի դատավարական չել, իսկ պահանջի իրավական քննուրը մնում է անփոփոխ/պես, օրինակ, Կոմմենտարի և գրայդանսկому процессуальному кодексу РФ. Под ред. Жилина Г.А., М., ТК Велби, 2003, № 282/. Ըստ ՀՀ վճռաբեկ դատավարական դիրքորոշման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության շրջանակներում չեն կազմություններ կազմությունները և դրանք հայցի դատավարական վեճը պահանջանառ է դատավարական դիրքորոշման մեջ՝ որին ԵՀԿ/1373/02/10/2011թ. քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատավարական դիրքորոշումը՝ 20.01.2011թ. որոշումը/:*

2. *Դա հավասարապես վերաբերում է նաև վերադարձական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ հերթակերպում «նոյն առարկայի մասին» օրենսդրային հարույրը վերաբերում է հայցի առարկային /դիւն ԵՀԿ/1373/02/10/2011թ. քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատավարական դիրքորոշումը՝ Երևան 20.01.2011թ. որոշումը/:*

3. *Տե՛ս Օսօկինա Գ.Լ. Գրայդանսկий процесс. Общая часть. М.: «Юристъ», 2013, № 450:*

4. *Տե՛ս Արզմանյան Գ.Մ. Իրավունքների պաշտպանության հայցային չելք իրավ. գիրք թեկնակի արդիականությունների մեջ, Երևան, 2006:*

5. *Տե՛ս Օ.Բ. Իսաենկովա, А.А. Демичев, Т.В. Соловьева, Н.Н. Ткачева. Иск в гражданском судопроизводстве. «Волтер Клювер». 2009, № 63:*

6. *Տե՛ս Գյուրիշ Մ.Ա. Учение об иске /состав, виды/. М., ВЮЗИ, 1981, № 6, Гражданское процессыуальное право. Под ред. Шакарян М.С. М., 2004, № 199, Գորդոյն Ս.Վ., Սովորական քաղաքացիական դատավարություն, «Հայաստան» իրավ. Ե.1972, № 159, Власов А.А. Гражданское процессыуальное право: М.: ТК Велби, 2004, № 201:*

7. *Տե՛ս Շեղլով Վ.Н. Иск о судебной защите гражданского права. Томск, Томский ун-т, 1987, № 20, Осокина Г.Л. Гражданский про-*



цесс. Общая часть. М.: “Юристъ”, 2013, № 451:

8. Տե՛ս Դօքօվօլսկի Ա.Ա. *Исковая форма защиты права /основные вопросы учения об иске/, М. Изд. МГУ, 1965, 126-127 էջերը:*

9. Տե՛ս Պեղրոսյան Ռ.Գ. *Հայաստանի քաղաքական դատավարություն, Ուկան Երևանցի, Ե.-2012, էջ 235:*

10. Տե՛ս, օրինակ. *Комментарий к гражданскому процессуальному кодексу РФ (посттейный). Под ред. Жилина Г.А., М., ТК Велби, 2003, էջ 272:*

11. Հայցի երրորդ գարբի՝ «հայցի բովանդակության» գոյությունը պնդող հեղինակները այդպիսին համարել են հայցի «խնդրամիջային կերը», հայցվորի կողմից պահանջվող «դարական պաշտպանության եղանակը»: Նշված գիտակերը ճշշդ չի համարվում, քանի որ իրավունքի պաշտպանության եղանակները միմնուն են հայցի առարկայի բովանդակության մեջ, իսկ դադարական օրենտրությունը «հայցի բովանդակությունը», որպես հայցի ինքնուրույն դարր, չի առանձնացնում:

12. Տե՛ս *Гражданский процесс. Под ред. Треушикова М.К., Издательский Дом, М., 2010, էջ 45: Պեղրոսյան Ռ.Գ. Հայաստանի քաղաքական դատավարություն, Ուկան Երևանցի, Ե.-2012, էջ 236:*

13. Տե՛ս Осокина Г.Л. *Гражданский процесс. Общая часть. М.: “Юристъ”, 2013, էջ 452:*

14. [http://www.juristlib.ru/book\\_386.html](http://www.juristlib.ru/book_386.html) Амосов С. *Предмет доказывания в арбитражном процессе.*